

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԿԻ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՇԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

19 մարտի

**1921 թ. մոսկովյան պայմանագրի
100-ամյակի առիթով հրավիրված կլոր
սեղան քննարկման մասնակիցներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված պայմանագրի 100-ամյակի առիթով մարտի 18-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի եւ Ռուսաստանի Դաշնության մի խումբ առաջատար մասնագետների հետ հրավիրված կլոր սեղան քննարկման մասնակիցներին՝ ուղեկցությամբ

կայացրեց պատճառված վնասները, խոսեց հայրենիքի կորստյան ցավի եւ առկա մարտահրավերների, միջազգային հանրության արձագանքի մասին: Այս կապակցությամբ Հայոց Հոլիվապետն իր գնահատանքը հայտնեց ՌԴ իշխանությունների կողմից պատերազմական գործողությունների կասեցման եւ տարածաշրջանում խաղաղության վերահաստատման գործում ներդրած ջանքերի առնչությամբ: Արցախի շուրջ առկա խնդիրների հան-

22 մարտի

**Արցախի թեմում ձեռնադրված նորած
քահանաներին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց 2020 թ. սեպտեմբերի 13-ին՝ Խաչվերացի տոմին, Գանձասարի վանքի Սուրբ Հովհաննես Սկրտչի եկեղեցում քահանայական ձեռնադրության ու օծման արժանացած եւ իրենց 40-օրյա պահեցողության ու պատրաստության շրջանը պատերազմի օրերին Գանձասարի վանքում անցկացրած երկու քահանաներին՝ Մխիթար քին. Հարությունի եւ Խաչատուր քին. Հայրապետյանին՝ ուղեկցությամբ Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի: Վրթանես եպիսկոպոսը Հայոց Հոլիվապետին ներկայացրեց քահանա հայրերին՝ տեղեկացնելով, որ նորածներն արդեն իրենց հոգեւոր սպասավորությունն իրականացնում են Հայոց եկեղեցու անդաստանում: Մխիթար քահանան՝ Արցախի թեմում, իսկ Խաչատուր քահանան՝ Սյունյաց թեմում:

Այնուհետեւ հովվական ծառայության կոչվելու առիթով քահանա հայրերին իր օրհնությունը բերեց Վեհափառ Հայրապետը՝ ընդգծելով, որ արդյունավոր եւ հաջողյալ սպասավորության երաշխիքը ժողովրդի նկատմամբ անսակարկ սերն է, հանձնառությունը, պատաս-

խանավությունն ու անվերապահ նվիրումը վստահված համայնքի հանդեպ: Նորին Սրբության խոսքի համաձայն՝ այդ առաքելությունների դրսևորման պարագայում է, որ հոգեւոր հովիվը կարող է արժանանալ ժողովրդի սիրուն ու հարգանքին:

Անդրադառնալով հետպատերազմյան դժվարին կացությանը եւ մարդկանց ծանր հոգեվիճակին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հաստատեց, որ այս իրավիճակում հայ ժողովրդի զավակներն առավել մեծ չափով կարիքն ունեն հոգեւոր խնամքի եւ հոգածության: Հայրապետը վստահություն հայտնեց, որ քահանա հայրերը պատասխանատվության մեծ զգացումով կիրականացնեն իրենց հոգեւոր ծառայությունը՝ ուժ տալով իրենց համայնքայիններին հաղթահարելու առկա մարտահրավերները եւ զորացնելով լավատեսության ոգին ու հավատը հայրենիքի գալիք օրվա նկատմամբ:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պապականիչ աղոթքով օրհնեց նորած քահանաներին՝ մաղթելով նրանց բարեհաջող, օրհնյալ ծառայություն:

28 մարտի

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում իր դիվանագիտական առաքելությունն ավարտող Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջուն Յամադային:

Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց դեսպանին Հայաստանում իրականացրած առաքելության համար՝ բարձր գնահատելով վերջինիս ներդրած ջանքերը երկու երկրների համագործակցության սերտացման եւ ժողովուրդների միջեւ կապերի առավել ամրապնդման գործում: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը վստահություն հայտնեց, որ դեսպանը նույն ջանքերով կշարունակի իր հետագա ծառայությունը:

Դեսպան Յամադան շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Սուրբ Էջմիածնի այն համագործակցության եւ զորակցության համար, որ ցուցաբերվել է հայ-ճապոնական մշակութային կապերի զորացման գործում: Դեսպանը խոսեց Հայաստանում ծառայության իր տարիների տպավորությունների, մասնավորապես հայկական մշակույթի եւ նրա յուրօրինակության մասին:

Հանդիպման անդրադարձ կատարվեց Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողու-



թյուններին, պատերազմի աղետալի հետեւանքներին եւ առկա մարտահրավերներին, ինչպես նաեւ միջազգային հանրության արձագանքին: Այս կապակցությամբ Նորին Սրբությունն իր երախտագիտությունը հայտնեց այս դժվարին օրերին ճապոնիայի կողմից Հայաստանին ցուցաբերված զորակցության համար:



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանի եւ Խ. Աբովյանի անվան ՀՀԿԻ ղեկավար, պ. գ. դ., պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի:

Հանդիպմանը պրն Ռուբեն Միրզախանյանը Նորին Սրբությանը ներկայացրեց քննարկման առիթով Հայաստան ժամանած մասնագետներին եւ տեղեկություններ հաղորդեց կլոր սեղան քննարկման արդյունքների վերաբերյալ: Հայաստանի եւ Արցախի համար դժվարին այս շրջանում նախաձեռնությունն օգտակար նկատեց քննարկման մասնակից, «Միջազգային վերլուծություն» ամսագրի գլխավոր խմբագիր պ. գ. թ. Սերգեյ Մարկեդոնովը՝ անդրադառնալով նաեւ արցախյան պատերազմի հետեւանքներին եւ տարածաշրջանում առկա մարտահրավերներին:

Այնուհետեւ ներկայներին իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհունակություն արտահայտելով կարելու այս նախաձեռնության կազմակերպման առիթով: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց գիտակրթական հաստատությունների պատասխանատուներին եւ մասնակից փորձագետներին՝ ընդգծելով անհրաժեշտությունը նման պատմական իրադարձությունների համատեղ վերաժարման, ինչը նաեւ նպաստում է երկու բարեկամ ժողովուրդների հարաբերությունների եւ փոխգործակցության առավել սերտացմանը:

Անդրադարձ կատարելով արցախյան երկրորդ պատերազմին՝ Նորին Սրբությունը ներ-

գուցալուծման համար Վեհափառ Հայրապետը անհրաժեշտ համարեց բանակցային գործընթացի վերականգնումը:

Նորին Սրբությունը տեղեկացրեց նաեւ, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի ու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ Դադիվանքի հոգեւոր կյանքի ու անխաթար աստվածաշնորհության եւ սահմանամերձ վանքերի անվտանգության ապահովումը: Հայոց Հայրապետը մասնավոր անդրադարձ կատարեց գրավված եւ հանձնված տարածքներում Ադրբեջանի իշխանությունների կողմից հայկական պատմական հոգեւոր-մշակութային ժառանգության հանդեպ որդեգրած ռազմավարությանը, մասնավորապես՝ պատմական հուշարձանների եւ սրբավայրերի ավերման, ամրագրման ու պղծման, հայկական ինքնության ոչնչացման դեպքերին՝ հույս հայտնելով, որ այս երևույթները կարժանանան միջազգային հանրության, ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից պատշաճ գնահատականի:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին դարաբաղյան հակամարտության կարգավորմանն ի նպաստ միջեկեղեցական եւ միջկրոնական ձեւաչափով կատարված աշխատանքներին, Արցախի հոգեւոր եւ մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ Մայր Աթոռի կողմից ձեռնարկվող քայլերին եւ Հայաստանում ներքաղաքական կյանքի զարգացումներին:

Ծաղկազարդը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում




Մարտի 28-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնակատարեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակը՝ Ծաղկազարդը։ Տերունական տոնը տարիներ առաջ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ հռչակվել էր մանուկների օրհնության օր։

Անդրադառնալով եկեղեցիներում Ծաղկազարդի առիթով տեղի ունեցող արարողություններին՝ սրբազան հայրը նշեց. «Եկեղեցիների այս շքեղ ծաղկազարդումն այսօր պարզապես օրինակ է, առիթ եւ ներշնչման գրգիռ՝ հավատքի ծաղկուն ոստերով ծաղկազարդելու ինքներս մեզ, մեր ներքին ու հոգեկան եւ բարոյական անձը։

Վերջին տարում աշխարհը փոթորկող համավարակին եւ պատերազմներին՝ ընդգծելով. «Այս օրերին, երբ բոլորիս մտքերն ու աղոթքներն ուղղված են ներկա կացությունը փոխելուն, մեր ներքին խռովքը փարատելուն, առավել քան կարիք ունենք մեր հայացքները դեպի երկինք՝ դեպի մեր Աստծուն ուղղելու, զղջումի,

հորդորեց ներկաներին. «Սիրելի մեր ժողովուրդ, այսօր դուք եւս, ձեր հոգեւոր պարտեզից վերցված եւ օրհնված ոստերով ընդունելով Տիրոջը ձեր սրտերում, փառաբանեք եւ օվսանաներ վերառաքեք երկնքի ու երկրի Արարչին՝ չնոռանալով երբեք, որ ամեն ինչում միշտ հավատարիմ պիտի մնանք Նրան, Ով Իր կյանքն անգամ

Այս առիթով Առավոտյան Ժամերգության ավարտին, Ս. Գայանե վանքի շրջափակում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Անդաստանի արարողություն եւ մանուկների օրհնության կարգ։ Այնուհետեւ Նորին Սրբությունն իր օրհնությունը բաշխեց Մայր Աթոռում համախմբված բազում մանուկներին։ Վերջում հավատացյալներին բաժանվեցին Անդաստանի ընթացքում օրհնված ուռնու ճյուղեր։



Պատարագի սրբազան արարողությունը կատարվեց Ս. Գայանե վանքում։ Պատարագիչն էր Մայր Աթոռի վանքի լեռնային Արտակ եպս Տղաբայանը։ Արտակ սրբազանն իր քարոզում, անդրադառնալով տոնի խորհրդին, մասնավորաբար նշեց. «Երբ Տերը մուտք էր գործում Երուսաղեմ, մարդիկ ամենայն ուրախությամբ եւ անկեղծ ցնծությամբ օվսանաներ էին բացականջում, սակայն նույն այդ ժողովուրդը մի քանի օր անց Պիղատոսի առջեւ կանգնած պիտի սառնասրտորեն պահանջեր ու գոչեր. «Խաչը հանիր, խաչը հանիր դրան» (Հովհ. ԺԺ 6)։ Հիսուս ամեն ինչ գիտեր, սակայն մարդ արարածի հանդեպ Իր ամհուն սիրով լցված եւ հնազանդվելով Հոր կամքին՝ Իր քայլերն ուղղեց դեպի մահ, որը կյանք պիտի տար ողջ մարդկությանը»։

Հավատքով ծաղկուն ոստերը մեր բարության օծված մտածումներն ու զգացումներն են, մեր աստվածահաճո խոսքերն ու գործերը, առաքիլությամբ լցված մեր կենցաղն ու վարմունքը, մեր խաղաղասեր ու խաղաղարար հոգին եւ մեր սիրով զեղուն նվիրումը, մեր բարեգործ գթածությունն ու առատաձեռն ողորմածությունը, մեր ճշմարիտ աստվածապաշտությունն ու մարդասիրությունը։

Արտակ սրբազանն անդրադարձավ նաեւ

դարձի եւ ապաշխարության, կարիք ունենք մեր ներքին բարոյական Գողգոթայի ապրումի, բարոյապես նորոգվելու եւ նոր ոճ ու մնայուն արժեքներ ստեղծելու, որպեսզի Տերը երկնքից լսի մեր աղոթքը, ների մեզ, բժշկի աշխարհը խռոված համավարակը եւ դադարեցնի ազգամիջյան պատերազմները։

Քարոզի ավարտին սրբազան հայրը, մեկ անգամ եւս աղոթք վերառաքելով առ Աստված, հայցեց Տիրոջ օրհնությունը ամենքի համար, ապա

չխնայեց մեզ համար, եւ Նա, լինի խաչին գանձված եւ կամ հարություն առած, մշտապես գրկաբաց սպասում է մեզ այսօր, վաղը եւ հավիտյանս հավիտենից. ամենա։

Պատարագի ավարտից հետո Ս. Տրդատի բաց խորանի առջեւ կատարվեց մանուկների օրհնության կարգ, որի ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետը վերստին իր օրհնությունը բաշխեց երեխաներին՝ այս կապակցությամբ նրանց ընծայելով փոքրիկ խաչեր։

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

← էջ 1

30 մարտի **ՀՀ-ում ԱՄՆ դեսպանին**



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ եւ լիազոր դեսպան Լին Մ. Թրեյսին։

Ի դեմս դեսպանի Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց ԱՄՆ իշխանություններին՝ համավարակի պայմաններում եւ հատկապես պատերազմյան ու հետպատերազմյան դժվարին շրջանում դեսպանատան միջոցով Հայաստանին եւ Արցախի ժողովրդին ցուցաբերվող հումանիտար աջակցության համար։

Անդրադառնալով Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծված ռազմական գործողություններին եւ հետպատերազմյան հետեւանքներին՝ Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համամախաբա հող երկրները կշարունակեն իրենց ջանքերը ներդնել տարածաշրջանում կայունության հաստատման եւ դարաբաղյան հակամարտության խաղաղ եւ արդար կարգավորման ուղղությամբ։

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց

համավարակի պայմաններում Հայոց եկեղեցու իրականացրած ծրագրերին եւ կրած ազդեցություններին։ Խոսվեց պատերազմի ընթացքում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ թեմերի կողմից ցուցաբերված աջակցության, ինչպես նաեւ զինծառայողների եւ Արցախից տեղահանված ընտանիքների հոգեւոր խնամքի մասին։ Վեհափառ Հայրապետը նաեւ տեղեկացրեց առ այսօր շարունակվող սոցիալական աջակցության ծրագրերի, զոհված եւ անհայտ կորած զինվորների ընտանիքների հետ տարվող հովվական աշխատանքի վերաբերյալ։

Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանը մասնավորապես արծարծեցին գերության մեջ հայտնվածների ազատ արձակման եւ անհայտ կորածների հայտնաբերման ուղղությամբ Հայոց եկեղեցու ձեռնարկած միջոցների հարցը։ Հանգամանորեն քննարկվեցին գրավված եւ հանձնված տարածքներում Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրները, սրբավայրերի պղծման եւ ոչնչացման փաստագրված միջադեպերը։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների ավանդը Մեծ եղեռնի նահապետների հիշատակի հավերժացման գործընթացում

«Մեծ է մեր վիշտը, խորունկ՝ մեր հուզումը նաեւ նրա համար, որ եվրոպական պետությունները ողբալիորեն ուխտադրուժ գտնվեցին մեր ազգի, մեր դատի հանդեպ եւ թույլ տվեցին, որ բաղադրակիր մարդկության հնագույն եւ թանկագին մեկ մասնիկը կազմող, Արեւելքում քրիստոնյա աշխարհի դարավոր առաջապահը հանդիսացող մեր բարի, մեր շինարար, մեր աշխատավոր եւ խաղաղասեր ժողովուրդը ենթարկվի անլուր մարտիրոսագործման»։

Վազգեն Ա Պալքյան

Իրեր շարունակ Հայոց կաթողիկոսներն ու հոգեւորականները մի ձեռքին՝ զենք, մյուսին՝ Ավետարան, կանգնել են հայ ժողովրդի ու զինվորի կողքին, ոգեշնչել նրանց ու բանիվ կամ գործով մարտնչել «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց», քանզի Հայոց եկեղեցին ազգային եկեղեցի է, նպաստել է ազգային ինքնության ու արժեքամակարգի պահպանմանը, ոչ թե հակադրության մեջ է մտել ազգայինի հետ, այլ, հոգեւոր դրոշմ դնելով, հոգեւոր հավիտենականության մի նոր փայլ է հաղորդել ազգային արժեքներին։ Այս իրողությունը նկատի ունենալով՝ Նիկոլ Աղբալյանը գրում է, թե չորրորդ դարում Հայաստանը քրիստոնեացավ, իսկ հինգերորդ դարում քրիստոնեությունը հայացավ։ Հայոց եկեղեցին ազգային է ոչ միայն այն պատճառով, որ Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդների գերակշիռ մասը հայ ժողովրդի զավակներն են, այլեւ որովհետեւ

Հայոց եկեղեցին անբաժանելիորեն միահյուսված է հայ կյանքին, հավաքական արտահայտությունն է հայ մշակույթի, արվեստի, դպրության եւ ներառել է անգամ նախաքրիստոնեական շրջանի այն տարրերը, որոնք կենսունակ էին եւ շարունակեցին կենցաղավարել նոր վարդապետության շրջանակում։ Այսպիսով՝ Հայ Առաքելական եկեղեցին, ժամանակակյան առումով, ներկայացնում է հայոց պատմության ընթացքի մի մասը, իսկ տարածական առումով՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը եւ հայկական գաղթավայրերը։

Հայոց ցեղասպանության տարիներին Օսմանյան կառավարությունը ոչ միայն հետեւողականորեն ոչնչացրեց Օսմանյան կայսրության սահմաններում ապրող բազմահազար հայ բնակչությունը, որի մեծագույն մասը Հայ Առաքելական եկեղեցու հետեւորդ էր, այլեւ դաժան հաշվեհարդար տեսավ հայ հոգեւորականների հետ, ոչնչացրեց հայկական մշակույթը, եկեղեցիներն ու վանքերը, ուսումնագիտական կենտրոնները։ Թուրքական իշխանությունները Կ. Պոլսի հայոց պատրիարք Ջավեն արք. Տեր-Եղիայանին աքսորեցին Բաղդադ, ապա՝ Մոսկու, իսկ Սոփ կաթողիկոս Սահակ Բ Խաչապյանին՝ Բաբ (Հալեպի մոտ), ապա՝ Երուսաղեմ։ Հայոց ցեղասպանության տարիներին նահատակվեց մոտ 4000 հայ հոգեւորական։ Ուստի բնական է, որ Հայոց եկեղեցին չէր կարող անտարբեր մնալ, դեռ ավելին՝ որպես որդեկորույս ծնող՝ պարտավոր էր նահատակների ոգեկոչման եւ նրանց հիշատակի հավերժացման գործընթացի դրոշակակիրը լինել... եւ եղավ։


→ էջ 3

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների ավանդը Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման գործընթացում

← էջ 2

Ըստ որոշ տվյալների՝ մեծ երգիծաբան Երվանդ Օտյանն առաջինն էր, որ Կ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթում առաջարկել էր 1915 թ. ամենը զոհերի համար հիշատակի հատուկ օր ընդունել եւ ոգեկոչել այդ օրը: Անվանի մշակութային գործիչ, համրագիտակ, «Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարիին» կոթողային աշխատության հեղինակ Թեոդիկը 1919 թ. նոյեմբերի 11-ին «Բարեշրջութիւն հայ օրացոյցի» վերնագրով հոդվածի մեջ առաջարկում է, որ, հայ ազգի հին նահատակների փոխարեն, օրացոյցի եւ եկեղեցու մեջ հիշատակվեն հայության նոր նահատակները:

1919 թ., երբ Կ. Պոլիսը գտնվում էր Անտանտի պետությունների զինված ուժերի հսկողության ռազմակալության տակ, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ մի խումբ հայ մտավորականների նախաձեռնությամբ ստեղծվում է «Ապրիլ տասնմեկի սգահանդէ-



սի յանձնախումբ», եւ 1919 թ. ապրիլի 12-ին Կ. Պոլսում կատարվում է եկեղեցական եւ աշխարհական սգահանդէս:

1920 թ. մարտի 25-ին անվանի հայ գրող Վրթանէս Փափագյանը, որը Վաղարշապատի դպրոցի տեսուչն էր, ամսական դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցին՝ առաջարկելով հայոց տոնացոյցի մեջ ամրագրել ապրիլի 11-ը (հին տոմարով)՝ իբրեւ «Յիշատակ 760 հայ նահատակ մտաւորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պատերազմի օրերին» թրջական վայրագ սրից»:

Նույն առաջարկը նա ներկայացնում է նաեւ Առաջին Հանրապետության խորհրդարանին, կրթության եւ արվեստի նախարարին: Հայոց Հայրապետն անմիջապէս արձագանքում է հատուկ շրջաբերականով՝ առ 26 մարտի 1920 թ., Երեւանի եւ Բաքվի կոնսիստորիաներին, Թիֆլիսի

առաջնորդին եւ Ղարաբաղի կառավարչին հանձնարարում է, որ «առաջիկա Ջատկի երկուշաբթի մեռելոցին, մարտի 30 / ապրիլի 12-ին՝ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեն ի յիշատակ 1915 թ. ապրիլի 11-ին Կ. Պոլիս եւ Հայաստանի բոլոր գաւառներում նահատակւած թիւով մօտ 760 մտաւորականների եւ հոգեւորականների»:

Քանի որ 1920 թ. ապրիլի 11-ը համընկնում էր Սուրբ Հարության՝ Ջատկի տոնին, որոշվում է Մեծ եղեռնի նահատակների հիշատակը նշել ապրիլի 12-ին՝ մեռելոցին: Այն հանգամանքը, որ Հայոց կաթողիկոսը հենց հաջորդ օրը տալիս է համապատասխան շրջաբերական՝ բավարարելով անվանի գրողի խնդիրը, ենթադրել է տալիս, թէ Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը նույնպէս մտադիր էր Մեծ եղեռնի զոհերի հիշատակի հատուկ օր սահմանել:

Արդեն հաջորդ՝ 1921 թ. Գեւորգ Ե կաթողիկոսը կոնդակով (առ 30 հոկտեմբեր 1921 թ.) կարգադրում է. «Մեք սովին Հայրապետական Կոնդակաւ հաստատենք զտօն 11/24 ամսեանն ապրիլի անուանելով զօրն «Տօն Ազգային-յիշատակի բիւրաւոր նահատակաց մերոց յընթացս համաշխարհային պատերազմին... որպէս եւ Մեք պատուիրեցաք տպագրելէս այսու յէս օրացոյցի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի»:

Այսպէս՝ եկեղեցական օրացույցներում ավելանում է եւս մի հիշատակի օր՝ ապրիլի 24-ը՝ որպէս հիշատակ Առաջին աշխարհամարտի ընթացքում նահատակված բյուրավոր հայորդիների: Ցավոք, 1926 թ., խորհրդային Հայաստանի կառավարության հատուկ որոշմամբ, արգելվեց Հայոց եկեղեցու կողմից Մեծ եղեռնի օրվա՝ ապրիլի 24-ի նշումը:

Այդպիսով՝ խորհրդային Հայաստանում 1926—1965 թթ. ոչ միայն պաշտոնապէս չէր նշվում Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օրը, այլեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցուն էր արգելվում ապրիլի 24-ին հիշատակի որեւէ արարողություն կամ հոգեհանգստյան կարգ կատարելը: Ինչպէս դիպուկ նկատել է արծակագիր Վարդգէս Պետրոսյանը, «...Մինչեւ 1965 թվականը, ամեն ապրիլի 24-ը մենք նույնիսկ զրկված էինք... տխրելու իրավունքից: Դա վիրավորում էր մեր ազգային ինքնասիրությունը՝ տարեցտարի գերլարման հասցնելով մեր ազգային համբերության եւ արժանապատվության պրկված զսպանակը: Եվ Մեծ ցեղասպանության 50-ամյա տարելիցի օրն այդ զսպանակը պայթեց»:

Իրավիճակը փոխվեց միայն 1965 թ.:

1964 թ. օգոստոսի 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինը հրապարակեց սրբատառ կոնդակ՝ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի կապակցությամբ: Կոնդակն սկսվում է Վեհափառ Հայրապետի՝ սեփական ժողովրդի պատմությանը տված բյուրեղյա գնահատականով. «Մեր հինաւորաց ազգի պատմութիւնը կենդանի յուշարձան մըն է, մարդկային աշխարհի հորիզոնին վրայ բարձրացող, շա-



ղախուած ու մարմին առած նահատակներու արիւնով, բարիքն ու գեղեցիկն ծառայելու ստեղծարար հանճարով եւ սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելու սրբազան կիրքով, այն օրէն մանաւանդ, երբ Աւետարանի լոյսը իջաւ ի Հայաստան աշխարհ: Քրիստոսի Աւետարանով հայ ժողովուրդը հաւատաց կեանքին, հաւատաց լոյսին ու շինարար աշխատանքին, եւ հաւատաց, թէ «սէր ոչ երբեք անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8)»:

Լուսամիտ ու բարեհամբաւ Վազգէն Առաջինն իսկապէս հանդգնած էր, որ «Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է յաղթութեան բրաբիոնով ու նոր կեանքի լուսաբացով, եւ վերածնած է մեր հինաւորաց երկիրը Հայաստան, իբրեւ ազգային պետութիւն: ...Այսօր, բոլոր հայերուն համար, ուր որ ալ գտնուին անոնք, աղօթքի օր է նաեւ մեր ժողովուրդի խաղաղ զարգացման ու բարօրութեան համար, մեր նորակերտ հայրենի երկրի անասանութեան ու շինութեան համար, ապրող ու շնչող եւ լոյսի մէջ աճող Մայր Հայաստանի համար»:

Մեր նահատակները մեռան ապրելու յոյսով եւ հայ հայրենիքի վերածնունդի տեսիլքով:

Այսօր բոլորիս համար աղօթքի օր է նաեւ համայն աշխարհի խաղաղութեան եւ ժողովուրդներու իրաւ եղբայրութեան համար, որպէսզի այլեւս երբեք աշխարհի երեսին ոչ մէկ տեղ արին չհոսի, եւ մարդիկ սուր չքաշեն իրենց նմաններուն վրայ: Թող խաղաղութիւն ըլլայ աշխարհի բոլոր սահմաններուն վրայ եւ բոլոր մարդոց սրտերէն ներս: Թող «ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմ. ԶԴ 14)»:

Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի առթիվ հրապարակած սրբատառ կոնդակում Ամենայն Հայոց Վազգէն Առաջին սրբանուն Հայրապետը տալիս է հետեւյալ հորդոր-իրահանգերը.

«ա. որ յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր եկեղեցիին եւ համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի եւ աղօթքի տարի»:

բ. որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիներուն մէջ ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ եւ հոգեհանգստեան պաշտօններ՝ աղօթելու համար մեր բիւրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորման համար»:

գ. որ բոլոր հայ եկեղեցիներուն մէջ, Ս. Սեղանի մը առջեւ, զետեղուին մշտական կանթեղներ՝ նուիրուած հայ նահատակներու յիշատակին: Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մշտական կանթեղ մը պիտի զետեղուի քրիստոնէութեան առաջին մարտիրոս Ս. Ստեփանոսի սեղանի վերեւ, ուր եւ այսուհետեւ պիտի մատուցուի յատուկ սուրբ պատարագ ամէն տարի ապրիլ 24-ին»:

դ. որ բոլոր հայ եկեղեցական համայնքներուն եւ զաղութներուն մէջ, Հայ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի եւ յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարուեստական միստեր հայ եւ այլազգի հասարակութեանց համար՝ նուիրուած Ապրիլյան եղեռնին:

ե. որ հայ եկեղեցական իշխանութիւնները, ազգային-հասարակական կազմակերպութիւնները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկութիւնները եւ հայ մամուլը իրենց սեպուի պարտքը համարեն խօսքով ու գործով ոգեկոչելու նուիրական յիշատակը Մեծ եղեռնի տարիներուն մարտիրոսացած հայ ժողովուրդին, հայ հոգեւորականներուն եւ գրական-հասարակական մեծանուն գործիչներուն՝ հրապարակելով հայ եւ այլազգի հեղինակներու պատմական վկայութիւնները, վաւերաթուղթերը, ուսումնասիրութիւնները, յուշերը եւ գրական-գեղարուեստական գործերը»:

Հայրապետական սրբատառ կոնդակում իրաւահանգներից հետո շարադրված է երկնապարգէն ու երկնառաք կաթողիկոսի մաղթանք-օրհնությունը, որը եզրափակվում է հետեւյալ խոսքերով. «Թող ապրի յաւէտ հայ ազգը համայն, որպէսզի շատնայ լոյսը աշխարհի»: Արդարեւ, հայ ազգի հայրենասեր ու ազգապաշտ հոգեւոր առաջնորդը եւ նույն ազգի երախտագետ զավակը, արդարորեն բարձր գնահատելով սեփական ազգի ներկայացուցիչների արժանիքներն ու կարողությունները, արժանին մատուցելով իր ազգակիցներին, նրանցից յուրաքանչյուրին համարում է մի-մի լուսատու, ապա վստահաբար հավելում, որ հայ ազգի կենսունակությամբ ու բազմամարդկությամբ շատանալու է աշխարհի լույսը:

Շարունակելի

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Ամանոր

Ամանորը աշխարհի շատ ժողովուրդների, նաեւ հայերիս տոնացոյցի հնագույն եւ ամենասիրված տոներից է: Հայաստանում անվանավել է *Նավասարդ* (հին պարսկերեն *նավա* («նոր») եւ *սարդ* («տարի») բառերից), *Ամանոր* (հին հայերեն *ամ* («տարի») եւ «նոր» բառերից), *Կաղանդ* (հին հունարենից փոխառյալ՝ լատիներեն *կալանդան* («տարեմուտ») կամ «ամսամուտ» բառից), *Տարեգնուխ*, *Նոր տարի* եւ այլն:

Գոյության հնագույն փուլում Ամանորը համարվել է բնության զարթոնքի, հողագործական աշխատանքների սկիզբն ավետող տոն եւ նշվել է զարմանալի գիշերահավասարի՝ փաստացի զարման առաջին օրը՝ մարտի 21-ին, որը համապատասխանում է հայոց հնագույն օրացույցի առաջին Նավասարդ ամսվա առաջին՝ Արեգ օրվան: Այդ օրը, երբ լույսը վերջապէս հաղթել է խավարին, ցերեկը՝ գիշերին, եւ բարին՝ չարին, հայերիս եւ հնդեվրոպական մյուս ժողովուրդների նախնիները՝ արեւածին արիները, Հայկական լեռնաշխարհում տոնել են իրենց դիցաբանի գերագույն աստծու՝



բնության զարթոնքի եւ բուսականության հովանավոր Արայի տոնը: Հնդեվրոպական ժողովուրդներն Ամանորն ավանդաբար նշել են այսօր էլ շարունակում են նշել զարմանը. Հին Հռոմում՝ մարտի 1-ին, մեր օրերում Հնդկաստանում՝ մարտի 10-ին կամ 26-ին, իսկ հարեւան պարսիկները մինչեւ այժմ էլ նշում են հենց մարտի 21-ին, տոնը կոչվում է *Նովրուզ* (պարսկերեն *նոու* («նոր») եւ *ռուզ* («օր») բառերից):

Որ հայերիս հնագույն տոնացույցում նույնպէս փաստացի զարման այդ օրն է ընդունվել որպէս տարեկիզբ, հաստատում են հայ եւ օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողներ, իսկ Մատենադարանում պահվող թիվ 1999 ձեռագրում բերված է հին հայկական եւ հռոմեական ամիսների զուգահեռ ցանկը՝ «Նաւասարդի, որ է մարտի, Հռոմի՝ ապրիլի... Հրոտից՝ փետրուարի»: Տարվա ամիսների ցուցակը մարտից է սկսել Ամանիա Շիրակացին՝ իր հայտնի «Աշխարհացոյցում»:

→ էջ 4

Մուշեղ Գալշոյան

Սկզբը՝ թիվ 3—5

Լաց ու կոծին, սուտ առասպելներին հա-կադրվելով՝ Գալշոյանն առաջնային է դարձնում ժողովրդի արժանապատվության հարցը եւ Ծիծեռնակաբերդի ու ապրիլի 24-ի կողքին, որ ամբողջ ազգի գլխահակ քայլելու ամենատխուր օրն է, հիշում է Սար-դարապատի հուշարձանը, մայիսի 28-ը՝ որ-պես հաղթանակի ու պետականության վե-րականգնման խորհրդանշան, եւ ժողովրդի ոգին անկոտրում պահելու նպատակով ան-գամ ավելի մեծ կարեւորություն տալիս վեր-ջիններին: Հակառակ դեպքում՝ անընդհատ պարտության, կորստի, ջարդի ու փախե-փախի մասին խոսելով՝ կթուլանա ժողովր-դի դիմադրած հարվածի ուժը: Այդ նպատա-կով նա նաեւ առաջարկում է կազմել հայ ժողովրդի պատմության հերոսական պա-ջարի էջերն ի մի բերող պատմագրական նյութերի ժողովածու եւ դպրոցներում դրա-նով կրթել մանկահասակ հայորդիներին: Միջանկյալ ասենք, որ հենց այդպիսի ժողո-վածուի արժեք ունի նրա վերջին գիրքը:

Տարբեր առիթներով գրողն արժարժում է նաեւ գրական այլ հարցեր: Այս տեսա-կետից նրա մտորումներին ծանոթանալու լավագույն հնարավորություն է արդեն մի քանի անգամ հիշատակված «Բագին» ամ-սագրի հարցազրույցը: Ընդ որում՝ ամսագ-րի այդ համարն ամբողջությամբ նվիրված է Մ. Գալշոյանին եւ ասես հիշատակի խաչ-քար լինի՝ դրված եղերաբախտ գրողի շիր-մաթմբին:

Ամենեւին էլ հրապարակման համար չնախատեսված այդ գրույցում, որը ձայ-նագրվել է, Գալշոյանն իր նկատառումներն է հայտնել դիրքերի վրա գտնվող որոշ պաշ-տոնատար անձանց հասցեին: Այնուհետեւ գրողն ասել է, որ 1965 թ. որպես զբոսաշր-ջիկ ցանկացել է գնալ Թուրքիա, բայց թույլ չեն տվել: 1915 թվականը մտաբերելիս նշել է, որ բնակչության բռնազաղթի հետ մեկ-տեղ նաեւ «հոգու գաղթ է եղել»: Այնուհե-տեւ. «Բայց հիմա, ինձ թվում է, հոգու վե-րադարձ է կատարվում <...>, դեպի ակունք են գալիս, իրենց ծնունդն են գալիս, դեպի հայրություն են գալիս»: «Մարութա սա-րի ամպերը» գրելիս Գալշոյանը հասել էր ստեղծագործական ազատության, ինչի ար-ձագանքն է նրա միտքը. «Այն, ինչ որ հիմա ես խոսում եմ՝ գրում եմ: <...> Այն, ինչ որ մտածում եմ՝ խոսում եմ, այն, ինչ որ խոսե-ցի <...> ներծծված է ամբողջ իմ գրածների մեջ»: Այնուհետեւ՝ եթե ավելի շատ ազա-տություն էլ տրվեր, «ես կգրեի էլի էնպես՝ ինչպես հիմա եմ գրում. ես չեմ հայհոյի, գրականությունը հայհոյանք չէ»:

Այնուհետեւ նա ասում է, որ իր ստեղ-ծագործություններում նա անընդհատ մի

կետի է կրակում, որը կարոտն է, կորցրածը եւ շա-րունակում, որ, այո՛, սթափ լինելու համար կորուստը, պարտությունը, ցավը պիտի ընդու-նել, բայց ընդունել «ոխով, վրեժով», որ կորցրածը հետ բերելու ճանա-պարհը չմոռացվի: Զրույցի ընթաց-քում խոսք է լի-նում այն մասին, որ «Ռանչապր-ների կանչ»-ում Դաշտենցը «մեծ տոկոսով», «գրե-թե տառացիորեն եւ գիտակցաբար»

օգտվել է Ռուբենի հուշերից, որին երեք հա-ջորդական հոդվածներով անդրադարձել է Պ. Սմայանը: Գալշոյանն ընդունում է՝ «էդ ճիշտ է», բայցեւ ավելացնում «Դա խանգա-րող համգամանք չէ»: Այդ հուշերի մի պա-տառիկից է ծնվել նաեւ Կ. Զարյանի «Տատ-րագունի հարսը»: Ի վերջո, այդպես էլ պետք է լիներ, որովհետեւ ազգային-ազատագ-րական շարժման մասին պատմող Ռուբե-նի հուշերը նորօրյա ամբողջական Հայոց պատմությունն են: Եվ ինչպես հիմնադրող ու հետագա դարերի մատենագիրներից, այնպես էլ Ռուբենից ու նրա ժամանակա-կիցներից պետք է օգտվել՝ նորօրյա շրջա-նի պատմությունը թե՛ գիտականորեն եւ թե՛ գեղարվեստորեն շարադրելու համար: Ընդ որում՝ պատմագիտական գրականություն լրջորեն ուսումնասիրում էր նաեւ Մ. Գալ-շոյանը եւ ճշգրտում իր գեղարվեստական վերացարկումների հիմքերը: Նույն հաջո-ղությամբ նրա ձեռքի տակ էին նաեւ Սա-սունին վերաբերող ազգագրական, բարբա-ռագիտական գրքեր: Եվ ինչպես Դաշտենցի առիթով ասել է, դրանք խանգարող հանգա-մանք չեն եղել: Ընդհակառակը:

Գալշոյանը, որն ազգագրական երգերի հրաշալի կատարող էր, գրույցի ժամանակ ասում է, որ «Զարթիր, լաո» երգն ինքն է հայտնաբերել ու տարածել: Իսկ այդ եր-գը երգ չէ սոսկ, այլեւ ազգային ծրագիր ու նպատակ, որին դավանում եւ որը գեղար-վեստորեն իրականացնում էր նաեւ գրողը: Ուստի, ով ժամանակակի լսել է Մ. Գալշոյա-նի երգը, թող նրա առնական ձայնով նորից բարձրանայն որոտա.

*Խուժան ասկյար զորք ժողովեց,
Եկավ Սշո դաշտը պատեց:*



*Սուլթան կուզե ջնջիլ մըզի,
Զարթիր, լաո, մըռնիմ քըզի:
Խեղճ մշեցիմ մեռավ լալով,
Օտար երկրներ ման գալով,
Մեռավ թուրքի հարկը տալով,
Զարթիր, լաո, մըռնիմ քըզի:
Չուր ես մնում էլու դռներ,
Երթամ գտնիմ զիմ խեղճ գառներ,
Չուքիմ զիմ բախշայի ծառներ,
Զարթիր, լաո, մըռնիմ քըզի:
Ի՞նչ անիծեմ թուրք ասկյարին,
Որ սպանեց ջոջ ափոյին,
Մեր հոյս թողեց օրորոցին,
Զարթիր, լաո, մըռնիմ քըզի...*

Այս էր գրողը թե՛ իր ազգային մտահոգու-թյուններով, թե՛ այդ ինքնակործան ցավից ծնված ակնարկներով ու հոդվածներով եւ թե՛ իր իսկ ձայնով թեւ առած երգի տողերով ու լեւելեցներով:

Կենսական այս հիմքերից բացի՝ Մ. Գալ-շոյանն ամուր հենված էր նաեւ հայ գրա-կան ավանդույթներին, որոնք գալիս էին բնաշխարհիկ արձակից, առաջին հեր-թին՝ Հ. Թումանյանից, Հ. Մեծտուրուց, Հա-մաստեղից, Ա. Բակունցից, Գ. Սահարուց, Խ. Դաշտենցից: Դա այն ուղղվածությունն էր, որ համապարփակ մի ընդգրկումով գե-ղագրում, գեղանկարչորեն լուսանկարում է հայրենի եզերքը, գեղարվեստական շունչ տալիս բնաշխարհիկ մարդուն, ամբողջ բնությանն ու կենդանական աշխարհին: Այդ եւ այլ գրողներից ոմանց ստեղծագոր-ծությանը հետագայում նաեւ տրվեց կա-րոտի գրականություն բնորոշումը, որը եւս ճշգրտորեն արտացոլում է գեղարվեստա-կան ուղղվածության հիմնական էությունը: Կարոտ՝ ծննդավայրի, անցյալ դարձող դեպ-քերի, դեմքերի ու հիշատակների հանդես:

Առավել չափով դա ընդգծվեց այն գրողնե-րի երկերում, որոնց ծննդավայրը մնաց իր տոհմիկ բնակչությունից բռնի դատարկ-ված Արեւմտյան Հայաստանում: Մի տաք ու ջերմացնող շնչով Մեծտուրին, Համաստեղը, Մահարին ոգեկոչեցին Արմտանը, Խար-բերդը, Վանը եւ կարծես գրականությամբ իրենց ծննդավայրը փորձեցին փրկել հա-վիտենական մոռացումից: Ի վերջո, նույն շունչն է թեւածում նաեւ Զարենցի «Երկիր Նաիրի», Թորոպենցի «Կյանքը հին հռով-մեական ճանապարհի վրա» վիպական գործերում: Զարենցի աչքի առջեւ թեւեւ ժա-մանակի հանրային-քաղաքական կյանքի վայրիվերումներն էին, բայց նա էլ ամենից առաջ ամենայն սիրով ու կարոտով կեր-տում է հայրենի Կարս քաղաքի կերպարը: Վերջին ականատեսների ձեռքով փրկվում էր նաեւ այդ հեռացող վայրերի կենցաղը, արձանագրվում էին մարդկային հարաբե-րություններն ու սովորույթները: Նույնա-տիպ հայացք իրենց ծննդավայրին ուղղում էին նաեւ Ա. Բակունցն ու Մ. Արմենը: Առա-ջինը կարոտով մտաբերում էր հին Գորի-սը՝ Կյորեսը, իսկ երկրորդը՝ հին Գյումրին: Անցյալին ուղղված մի ուրույն աշխարհ էր Դաշտենցի «Ռանչապրների կանչը» վի-պասքը՝ հյուսված ժողովրդական վրիժա-ռունների ազգային-ազատագրական պա-ջարի դրվագներով:

Ահա ավանդույթների այս շրջագծում, բայց միանգամայն ինքնուրույնաբար իր ստեղծագործական ուղին գծեց նաեւ Մ. Գալշոյանը: Նրա ամբողջ գրականու-թյունը, ինչպես ասացինք, հայրենի եզեր-քի կորստի, այն ոգեկոչող կարոտի հոգե-բանական շաղախ է՝ վիպական շնչի հետ մեկտեղ բռնկված նաեւ քնարական ջեր-մությամբ: Բայց Գալշոյանի հայեցակետը քիչ այլ էր, որովհետեւ այլ էին նաեւ նրա հերոսները: Դրանք ոչ թե ծննդավայրից հեռացած եւ կես առնապարհին մնացած մարդկային ճակատագրեր էին, այլ՝ շա-րունակվող կենսագրություններ: Նրա հե-րոսների ծագումնաբանությունն սկսվում է իրենց բնաշխարհում, ընթանում նրանց ընդդիմությամբ ու պայքարով, ապա շարու-նակվում ստիպյալ հեռացումով նախնինե-րի հողից եւ նոր տուն ու օջախի հիմնումով Հայաստանի մեկ այլ տարածքի վրա: Այդ մեկ այլ տարածքը եւս նրանց հայրենքին է, բայց ոչ ծննդավայրը: Եվ այստեղ է ահա, որ շարունակվում է նրանց հերոսական կեն-սագրությունը, քանի որ ամեն ինչ կորցնե-լուց հետո նրանք իրենց մեջ ուժ են գտնում վերստին նոր օջախ հիմնելու, բազմացնե-լու իրենց սերունդները, բուժելու անդար-մանելի վերքերը:

→ էջ 5

Ամասոր

← էջ 3

Ամանորի վերապրուկները հայոց մեջ մինչեւ այժմ էլ նշվում են գարնանը՝ Բարե-կենդանի տոնին:

Գիրգոր Ղափանցյանը բնության զար-թոնքի աստված Արայի անունը բխցրել է հնդեվրոպական մայր լեզվի *ար* արմատից, որ նշանակել է բարձրանալ, աճել, հարություն առնել: Իսկ անգլիացի գիտնական Արչիբալդ Սեյսն Արային համարել է զուտ հայկական աստվածություն, որի պաշտամունքն սկզբնա-վորվել է խստաշունչ ձմեռներին հաջորդող ծաղկուն գարունների երկրում՝ Հայաստա-նում, ապա տարածվել մեր ցեղակից եւ հա-րեւան հին ժողովուրդների դիցարանները: Այսպես՝ հին սիրիացիների բնության զարթոն-քի Արու եւ խեթերի Արա աստվածները, փյուռ-գիացիների բնության աստված Ատտիսը, սլա-վոնների գարնան զարթոնքի եւ պատերազմի աստված Յարը կամ Յարիլոն, հին վրացիների հողագործության հովանավոր Արալեն կամ Արալոն, փյունիկեցիների բուսականության աստված Արոնիսը, հին հույների ռազմի աստ-ված Արեսը, եգիպտացիների արեւի աստված Ռան եւ այլ դիցանուններ աղերսվում են Արայի հետ կամ նրա զուգահեռներն են:

Վերոհիշյալ աստվածությունների գերակ-

շիռ մասը մեզ հասած առասպելներում կան ունի բուսական ծագում, կան մահից հետո վերածվում է մշտադալար ծառի (սոճի, նոճի, եղևնի) կամ բույսի (կուժկոտրուկ (աղոնիս), վարդ): Օրինակ՝ բնության փյուռգիական աստված Ատտիսը ծնվում է նշեմու պտղից հղիացած Նանա դիցուհուց եւ Կիբելե աստ-վածուհու խանդից մեռնելով՝ վերածնվում է որպես սոճի: Համաճում մի առասպել բնու-թյան փյունիկյան աստված Արոնիսի մասին է պահպանվել. նա ծնվում է զմուռսի ծառից, եւ նրան սիրահարվում է պտղաբերության աստվածուհի Գեբալը: Գեղեցիկ Արոնիսը որ-սի ժամանակ զոհվում է վարագից ստացած վերքերից, եւ մահից հետո նրա արյան կա-թիլներից վարդեր են աճում: Հայոց բնության զարթոնքի աստված Արայի մասին մեզ է հա-սել Մովսես Խորենացու նկարագրած Արա Գեղեցիկի եւ Շամիրամի մասին պատմող հինավուրց ավանդազրույցը, որտեղ Արան նույնպես մահից հետո հարություն է առնում: Հայկական առասպելում Արայի բուսական ծագման եւ մահից հետո մշտադալար ծա-ռի վերածվելու մասին հիշատակություններ չկան, սակայն ակնհայտ է, որ առասպելում պատահական չեն Նվարդ, Սոսանդեր, Անու-շավան բուսական ծագումով անունները (վերջինս Արա Գեղեցիկի որդի Արայան Արա-

յի անունն է եւ իր մեջ կրում է «նոճի» ար-մատը):

Ահա ինչու հազարամյակներ շարունակ պաշտվող մշտադալար ծառը, որին որոշ ուսումնասիրողներ «գերմանական» ծագում են վերագրել, հազարամյակներ շարունակ պաշտվել է հնդեվրոպական շատ ժողովուրդ-ների կողմից, Նոր տարվա տոնին հաղորդել եւ այսօր էլ շարունակում է հաղորդել մշտանորոգ բնության եւ հավերժական կյանքի խորհուրդ: Հայկական ծիսական ավանդույթներում հա-ճախ է հիշատակվում կենաց ծառը, այն հա-մարվում նաեւ ընտանիքի պտղաբերության խորհրդանիշ, մասնավորապես Ամանորի հնա-գույն երգերում տան անդամներին ուղղված բարեմաղթանքներում օջախի ապագա շենաց-նողին եւ ուղղվում այսպիսի խոսքեր՝

*Արամ ճութ էր, էլ ճբացավ,
Քյանց բարդի ծառ էլ հերկնցավ,
Քյանց ուռի ծառ էլ կանանչավ,
Քյանց կաղնի ծառ էլ պնդացավ,
Շղեր թալեց քաղբե-քաղաք,
Անեն ճղին՝ ջուխտըմ ճրագ,
Արամ նստեր ծառի տակին,
Գավաթն ի ձեռ՝ նռան գինին...*

Իսկ Ամանորի մյուս խորհրդանիշը՝ Չմեռ կամ Կաղանդ պապը, որին նույնպես «գեր-

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՅԿԱՆՅԱՆ (1830–1892)



Սկզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1–5

ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԱՐՁԱՎԸ

Պուրակալից հարեալ՝ Սկըր աղան («Տիրացի»), դժգոհ է քաղաքի ներկա կյանքի դժվարություններից, մեռելների շատանալուց, մոր սերնդի վարքագծից, անգամ մրգերի համից. «Լավ բան է պարտեզի հավեսը. մեր հայրերն ու պապերը, որ Դրիմից եկան, ի բնե հավես ունեին պարտեզի եւ տեսակ-տեսակ բույսերի. քիչ կպատահեր, որ բանջարեղենն ու միրգը շուկայից բերվեր. խնձոր, տանձ, բալ, կեռաս, սալոր, ծիրան, հաղարջ, վարունգ, մաղադանոս, սամիթ, բողկ, պատրի-ջան, տոլմայի դդում, գետնախնձոր, սոխ, սխտոր, ուրիշ տեսակ-տեսակ բույսեր, լոբի — բոլորը տանից էր» (Պատկանյան Ռ., *Երկեր*, Ե., 1980, էջ 392–393):

Եվ այս բնական զրույցն ընմիջվում է եկեղեցու զանգահարությամբ, որ յուրօրինակ մահազդ էր այն ժամանակներում: Հարուստ եւ աղքատ, ծեր կամ երիտասարդ մեռելներից յուրաքանչյուրի համար կար հատուկ տեսակի զանգահարություն: Եվ

երբ ժամկոչից իմանում են մեռածի ինքնությունը, զրույցը շարունակվում է Սոլթան Ղազարոսի ու նրա մահացած երիտասարդ աղջկա՝ գեղեցկուհի Կատարինի շուրջ:

Նոր ժամանակներն ու փողա-յին հարաբերությունները ցավա-գին հակասություններ էին առաջ բերել հին եւ նոր սերունդների միջեւ: Ուսուցման հին վայրերի եղանակները, համառոտ տգիտությունը եւ սովորույթի կաշկանդիչ ուժը մոր սերնդի համար հաճախ դառնում էին անհաղթահարելի խոչընդոտներ, որոնց հետեւանքով փրկվում էին մարդկային երազները, խեղվում ճակատագրերը:

Իրական եւ «Չախու» պատմվածքում ներկայացված դեմքերն ու դեպքերը: Իր խորտակված ճակատագրի մասին ջրկիր Մարտիրոսի պատմած հուզիչ դեպքերը թեւեւ նրա անձնական կյանքն են, սակայն չեն մնում փաստագրության շրջանակներում, այլ գեղարվեստականության շնորհիվ ձեռք են բերում ընդհանրացնող մեծ ուժ: Հեղինակն իրոք 1871 թ. ծննդավայրում գնած է եղել տուն

եւ հողակտոր, ուր տասնամյակներ առաջ՝ 1825–1830 թթ., կիսագրագետ տիրացու Վարդան Չախիսյանը՝ Սկրտիչ վարպետի նախատիպը, ժամանակի ընդունված եղանակներով ծեծով ու ֆալսիսկայով, «կրթություն է տվել» քաղաքի աղքատ խավերի մի քանի տասնյակ երեխաների: Դրանց մեջ է եղել նաեւ հեղինակի այգին ջրող Մարտիրոսը, որը ծառաբներից մեկի մոտ գտնում է հիսուն տարի առաջ կորած, իրեն դժբախտություն բերած այն դամակի ժանգոտած մնացորդը, որի պատճառով ինքը 14 տարեկանից «չախուի գող» էր հռչակվել ու մինչեւ ծերություն կրել դրա դառը հետեւանքները (մանրամասն տես Սաղյան Մ., *Նշվ. գիրքը*, էջ 260–261):

Պատմվածքում ներկայացվում է բացառիկ ընդունակություններով օժտված, սովորելու անհագ տենչ ունեցող, քրիստոնեական բարոյական ամենաբարձր մարմնավորող մի կերպար, որ հալածվում է միջավայրի բիրտ ուժերի կողմից, կրում բազմաթիվ նվաստացումներ, ունենում զրկանքներ ու կորուստներ, բայց չի կորցնում ազնիվ շիտակությունն ու մարդկային բարձր նկարագիրը: Իր ողջ գոյության ըն-

թացքում հայ ժողովուրդն է եղել այդպիսին («Էր չեղանք հայերս սրիկա մարդասպան»):

Մարտիրոսը մույնպես ուշացումով հանգել է այդ եզրակացությանը: Պատմվածքն ավարտվում է կարեւոր ընդհանրացումով. հեղինակի հարցին, թե իր բոլոր դժբախտությունների համար նա ի՞նչ է մեղադրում՝ Սկրտիչ վարժապետին, Մաթեոս աղային, մյուսներին... Մարտիրոսը պատասխանում է.

«...նրանք ոչ մի մեղք չունեն, նրանք են արին, ինչ որ խելքները կտրեց, ես էլ եմ պիտի անեի, ինչ իմ խելքն էր կտրում: Ես քեզ կարձ ասեմ. աշխարհքս էսպես է. ուզում ես, որ քեզ չկծեն՝ նախ ինքդ կծիր ամենքին, կուզեմ, որ վրադ չհաչեմ, նախ ինքդ ամենի վրա հաչի, ուզում ես, որ անունդ չսեւացնեն՝ ռաստ եկողի անունը սեւացրու... Էդ ամենը ես վաղուց գիտեի... բայց մեջս մի բան կար, էդ բանի անունը խղճմտանք է, շտե նա էր իմ ամենավատ թշնամիս, նա էր իմ գլխին էս ամեն վատությունը բերողը... Ախպեր, մեզ դժ էր ասել, թե գառը լինենք, որ գայլերը մեզ ուտեն» (Պատկանյան Ռ., *Երկեր*, Եր., 1980, էջ 356):

1870-ական թթ. սկզբներին թիֆլիսյան բեմը թողացնում էին Սունդուկյանի «Պեպոն» ու «Քանդած օջախը», Ռաֆֆին իր վեպերով մագնիսացրել էր գրական մթնոլորտը: Այս ժամանակում Պատկանյանի ուղեւորությունը Թիֆլիս եւ մանավանդ անձնական հանդիպումները ժամանակի ազդեցիկ գրական հեղինակություններին՝ մեծ տպավորություն են թողել նորմալի-ջեւանցի գրողի վրա: Ռուսական կայսրության հարավային քաղաքներում՝ Թիֆլիսում եւ Նոր Նախիջևանում, ի հայտ եկած նոր երեւոյթները մտահոգիչ էին բոլոր ճշմարիտ արվեստագետների համար, եւ անխուսափելի էին համանման հարցադրումները. «Չի՞ս տեսնում, վուր սաղ քաղաքը գիւմարիով լցվի է. քիզ դժ էր ասում՝ օխ չըրի երիշով ման գաս, չի՞ս գիդի վուր բուրդդ կու գգին», — ասում էր Սունդուկյանի Պեպոն:

Նոր ժամանակների բերած նյութական ու բարոյական աղետները համընդհանուր էին խղճմտանք ունեցող բոլոր ազնիվ մարդկանց համար: Աթաբ Սարգիսը եւ Գուլաբինգ Օսեփը մույն համագամքների զոհերն են՝ մեկը Նոր Նախիջևանում, մյուսը՝ Թիֆլիսում: Այս իմաստով որոշ ընդհանրություններ ունեն Սունդուկյանի «Քանդած օջախը» ու Պատկանյանի «Պազ ազպար»-ը:

«Պազ ազպար» պատմվածքի բուն նյութը հեղինակը ներկայացրել է Հռոմանիմա

ճիճայի (մեծ քույր) պատմության միջոցով: Բայց պատմմի հավաստի լինելու երաշխիքներից մեկը նախ պատմողի վստահելիությունն է, իսկ վստահելի էր արդյոք Հռոմանիմա ճիճան: Առանց այդպիսի հարցադրման՝ հեղինակը նախ ներկայացնում է յոթանասունհինգամյա այդ կորույթի պառա-վին, որ թեւեւ գրեւ-կարող չգիտեր, բայց ժողովրդական հմուտ բժիշկ էր, պատկառման էր ազդում իր արագ շարժունակ, ինքնավստահությամբ ու համարձակությամբ. «Հռոմանիմա ճիճան յոթանասունհինգ տարեկան կնիկմարդ է, բայց քայլավաճքը, արագ-արագ խոսելը, կրակոտ աչքերը որ տեսնես, խաչը վկա հիսուն էլ չես տա. ինքը՝ առույգ, խոսքը՝ կտրուկ, ժամունքը՝ իսկական տղամարդու. հագի շրջագգեստը որ չլիներ, նրան դժ կնոջ տեղ կոներ» (մույն տեղում, էջ 358): Այսպիսի ասացողին ունկնդիրը, անշուշտ, հավատ պիտի ընծայեր, որովհետեւ նա պատմում էր ազատ ու անկաշկանդ, հերոսներին իրենց միջավայրում ներկայացնելով՝ նրանց կյանքի ու կենցաղի բնորոշ մանրամասներով: Այսպես է, որ աթաբ (մանրավաճառ) Սարգիս ընտանիքի կործանումը, նրա բարեկարգ տան փլուզումն ու ավերակվելը մոր ժամանակների ճարպիկ վաճառական, «մոր-մողմի խաբեբա» Մայասիլին Իվանուշի ենեզու-թյունների հետեւանքով ընկալվում են որպես հավաստի իրողություն:

Ինչպես Սունդուկյանի «Քանդած օջախ» պիեսում հանդես բերված Փարսիդը՝ Թիֆլիսում, այդպես էլ Մայասիլին Իվանուշը՝ Նոր Նախիջևանում, դառնում են ավանդական հայ բարեկեցիկ ընտանիքների կործանման պատճառ: Իվանուշը Փարսիդի երկվորյակն է, նրա պես բարձր դիրքը եւ իշխանության հասած հղիացած նորահարուստ, Նոր Նախիջևանի խիստ վտանգավոր, խղճմտանքից զուրկ աղաներից մեկն է՝ նախատիպ Հովհաննես Պապասիյանի անվան անձնաչելի թվացող (Հովհաննես-Իվանուշ, Պապասիյան-Մամասիյան-Մայասիլ) վերափոխումով: Սակայն Պատկանյանի կերտած կերպարը եւ նրա արարքների պատկերն այնքան են իրական, որ նախատիպը, երկը դեռ չտպագրված, ճանաչել էր իրեն:

Բարեմիտ աթաբ Սարգիսն ընկնում է այս Իվանուշի որոգայթը, կորցնում ողջ ունեցվածքը, հարկադրված հեռանում է Ստավրոպոլ, ցրվում է նրա ընտանիքը եւ կործանվում, իսկ նրա երբեմնի շեն տան տեղում մի երկու տասնամյակ հետո մնացել է մոր քանդած օջախը, այն ավերակը, որ կոչվում է *պազ ազպար*:

→ էջ 8

Մուշեղ Գալշոյան

← էջ 4

Բայց նաեւ կարոտի կանչը տանում է հեռու եւ սրբազան պաշտամունքի վերածում նախնիների նվիրական հողը:

Ամբողջությամբ այս է նյութի ընդգրկումն ու շրջագծի: Բայց սա միայն ընդհանուր հայացք է, քանի որ մույն պատմական ճակատագիրը կիսելով հանդերձ՝ յուրաքանչյուր հերոս ապրում է իր կենսագրությամբ: Այստեղ է, որ գրողը կարողացել է համընթաց զուգահեռներով ներհյուսել ընդհանուրն ու մասնավորը, պատմականն ու անձնականը: Եվ դա այնպիսի վարպետությամբ, որ, իրենց ամբողջ նկարագրով գրեթե մույն լինելով, նրանք տարբեր են ու առանձնահատուկ:

Այսօր էլ առաջացած տարիքում ապրում են Գալշոյանի հերոսների վերջին բեկորները եւ մի չփարատվող երանի տալիս այն օրվան, երբ հավիտենական քնից առաջ հնարավոր կլինի գոնե մեկ անգամ գնալ ու տեսնել ավետյաց երկիրը: Սա հիշեցնում ենք՝ վերստին ընդգծելու գեղարվեստական խոսքի այն կենսունակ ու կենսական պաշարները, որ իր հերոսների խոսք ու զրույցով բերում էր այդ սերնդի հոգեդրոհի գրողը:

Կորստի ու կարոտի մեջ տարուբերվող այս դառնաղի զգացողություններն



աստիճանաբար ուրվագծում են Գալշոյանի ստեղծագործական առանձնահատկություններից մեկը, ինչը, ըստ էության, մարդ-հայրենիք համաձույլ խորհրդանշանի հայտնաբերումն է: Մարդը՝ որպես հայրենիք՝ իր ճակատագրի մեջ խտացված ժողովրդի պատմությամբ, ազգային նկարագիրն ամփոփող սովորույթներով ու բա-

րոյականությամբ: Այսինքն՝ ոչ թե քամու բերանն ընկած անհատ՝ իր զուտ մարդկային կենսագրությամբ, որը կարող է նաեւ ավելի հետաքրքիր լինել, այլ ժողովրդին վիճակված ճակատագիրն ապրող անհատ: Մարդ, որն իր յուրաքանչյուր արարքով պիտի համապատասխանի ընդհանուր սկզբունքներին, հակառակ դեպքում անելիք չի ունենա այդ միջավայրի մեջ:

Մարդ-հայրենիք. սա այն է, ինչը հայրենապատումն ազատում է պատմագրությունից, գաղափարական ճառից ու մարդկայնացում, ոգեղենացում:

Այս ամենի համար էական է դառնում ժամանակների կապը՝ անցյալ-ներկա-անցյալ անցումներով՝ այդպես բեկելով հերոսներից յուրաքանչյուրի կենսագրությունը:

Ժամանակային կապի դրսևորման ձևերն են՝ սերնդային հաջորդականություն, անցյալին ուղղված հիշողություն, անցյալին զուգահեռված ներկա կյանք, ներկայի մեջ կիզակետված անցյալ: Ժամանակային կապի գեղարվեստական հոսքն արձանագրվում է խոսքային շերտերով՝ ասվող խոսք,

չասվող, բայց ենթադրվող խոսք, ներքին խոսք: Անցյալի, ներկայի հոգեւոր աղերսն էլ ստեղծում է եւ ժամանակների, եւ խոսքային շերտերի կապը:

Ժամանակը գրողի առջեւ զանազան ուղղություններ է բացում: Գալշոյանի ստեղծագործելու տարիներին լայն թափ էր առնում հոգեվերլուծական, գոյափոխության, առասպելաբանական արձակը: Գայթակղիչ ու տիրական ուղղություններ: Բայց նա գնաց այն ճանապարհով, ինչ թելադրում էր իր նյութը եւ երբեք օտարաշունչ գեղարվեստական տարր չներմուծեց իր խոսքի մեջ: Ոչ թե դա լավ չէր, ոչ թե նա չէր կարող, այլ պարզապես չկամեցավ տեսությունը պարտադրել նյութին եւ ամեն կերպ ցանկացավ արվեստի փաստ դարձնել իր պատկերած նյութի գեղագիտությունը: Ներքին ոգեւորությունը, առանց խորթության մատնելու, նրան մտորեց մայրուղու գրականության մեջ: Իրենն այնքան որոշակի դարձրեց, որ անգամ իր չգրած, բայց իր համար ենթադրելի նյութն ընկալվում էր իր իսկ դիտանկյունից: Բազմաթիվ սյուժեներից բերեն միայն մեկը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՄԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՉԱՐԷ ԽՐԱԽՈՒՆՈՒ ՀԱՅՐԵՆԱԴԱՏՈՒՄԸ

Սկիզբը՝ թիվ 4–5

Ինքնատիպ գեղարվեստական պատկեր ենք գտնում Խրախունու «Երիցուկներ» ստեղծագործության մեջ: Ձմեռային, անձրևներից, լույսի կարոտ օրերից հետո՝ «իբրեւ հույսի բեղմնավորող», գարնան առույգ հովիւն իրենց գեղեցիկ գլխիկներն են բարձրացրել երիցուկները: Նրանք պիտի շողան արեւի տակ, նրանք համայնական նվիրումով պատրաստ են հնձվելու գեղջուկի սուր մանգաղից կամ դառնալ մեծ ու փոքր արջառնակի տաք շնչին կեր: Այդ բոլորին հոժարակամ պատրաստ են, միայն թե չգա մի հիմար եւ չպոկի ծաղիկները ու դեն նետի (նույն տեղում, էջ 72):

Այնքան քնքուշ-ազազուն
Անոնք պատրաստ համայնական
նվիրումի կը սպասեն...
Գեղջուկին սուր մանգաղեն հնձվելու
տարածում
Մեծ ու փոքր արջառններու տաքուկ դուռնեն
արագ արագ լափվելու,
Մեքենական արորներու անիվներեն
տրորվելու
Լայնաբերան խոփին ներքեւ հողերուն
տակ թաղվելու...
Այս բոլորին հոժարակամ պատրաստ են—
Միայն չգա աղէկ մը հույլ ու հիմար
Չփրցնեն հատ մը հոսկե, հատ մը հոնկե
ըստ բախտի
Ապրիւմ-մեռնիւմ չխաղա...

Ինքնատիպ պատկերում առկա է գաղափարական մեծ շեշտադրում: Հայրենիքի համար պայքարող մարդն էլ գնում է ինքնագիտակցված մահվան՝ հասկանալով, որ այդպես իր հայրենիքն է պաշտպանում եւ ազատության համար զոհվում: Հիշենք Գրիգոր Չոհրապի «Երջանիկ մահը» նորավեպի հերոսուհուն, որը մահանում է սիրած էակի գրկում՝ մամնվելով բաժակի, որը ցնծության պահին է կոտրվում եւ ոչ թե սպասավորների ձեռքում՝ այն անփութորեն վանալիս:

«Պատմություն» շարքն ավարտվում է «616» ծավալուն բանաստեղծությամբ, որը պատմական համեմատական զուգահեռի հիման վրա ներկայացնում է վեց եւ ավելի դարերով իրարից հեռու երկու Լեւոնների

ազգային-քաղաքական հակադրական պատասխանատվությունը, գործունեության խաղացած դերն ու նշանակությունը ժողովրդի լինելիության տեսանկյունից (նույն տեղում, էջ 57–58):

Ուրեմն ըսենք պարզորեն 616
Մյուս անգամար թիվերուն պես որեւէ
բաժանելի անբաժան
թիվի հաշվի օրենքներուն հպատակ
եւ գումարը տասներեք—
Բայց երբ մեկ բառ ավելցնենք անկե վերջ
վեց հարյուր տասնեց տարի—
Այն ատեն կըլլա մախճիր պատմություն
ջարդ գաղթ սով ախտ որբություն
Սուր հալածանք հուր տառապանք
բռնություն...

Կիլիկյան Հայաստանի անկումից 616 տարի անց վերականգնվեց հայոց նոր պետականությունը: Բանաստեղծությունը նվիրված է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին (նույն տեղում, էջ 56–57):

Առյուծասիրտ ուրիշ մարդ մը — ուրիշ
Լեւոն մը արի
(գիտենք արդեն Լեւոն, Ղեւոնդ
իմաստն ունին առյուծի):
Անցնել վերջ տառապանքի
հալածանքի ու կալանքի ճաղերեն
Կը խորտակե յոթանասունամյա
կապանքները իր ազգին
Կը բարձրանա ամբիոն...

Արդյո՞ք կարիք կա պատմության խորքը մտնելու, իրողություններին ու երևույթներին նոր մեկնաբանություններ տալու, զուցե չպետք է միտքը չարչարել՝ հարցերի պատասխանները թողնելով պատմագետներին, աստղագետներին ու «թաքնագետներին»:

«Հոգեհանգիստը» մարտահրավեր է անցյալի մեր ողբերգության գեղարվեստական ընկալումներին: Այստեղ նկատելի է թունալույսով հարախուսի զուգահեռը: Արեւմտահայ բանաստեղծը պատմության խորքային ճանաչման մեկնիչն է, իսկ նրա լավատեսությունը զուսպ է՝ ժամանակի հայտնի դասերով պայմանավորված (նույն տեղում, էջ 89):

Հոգեհանգիստ բոլոր անոնց, որ
գերեզման չունեցան—
Անդորություն խոպաններուն,
ճահիճներուն ու գետերու ջուրերուն,

Ճամբաներուն անվերադարձ որ ոչ մեկ
տեղ կը տանին
Ու կը խրին փոշիներու լռության մեջ
անապատում...

Հոգեհանգիստ երազներուն, որ վաղորդայն
չունեցան
Հանգիստ բոլոր աքլորներուն, որ երգեցին
շատ կանուխեն եւ

այգաբաց չտեսան,
հաշ ու խորան այն հավատքին, որ
ավերակ հին տաճար մ'է


դեռ կանգուն
հաշահանգիստ այս ցավերու ծովուն վրա՝
ուր մեր նավն է
կտավ պարզեր անտրտում...

Ինչպես գրում է Ս. Դանիելյանը, «Զ. Խրախունին հոգեհանգիստ է կարդում նաեւ իր ժողովրդի անցյալ դարասկզբի երազներին, որոնք վաղորդայն չունեցան, մեր մշակույթին, մեր բանաստեղծներին, որոնք չապրեցին վաղվա օրը, չմոտեցրին ազատության առավոտը» (Ս. Դանիելյան, Միջուկի տրոհումը, Սփյուռքահայ գրականության պատմություն: Ներածություն, գիրք 1, էջ 87):

Գեղարվեստական հզոր պատկերներով հատապես ուշագրավ է ժողովածուի վերջին շարքը՝ «Իսկ ես...», որտեղ արտացոլված են բանաստեղծի փիլիսոփայական խոհերն ու մտորումները: «Իսկ ես...», «Աքսորական», «Վարդենի», «Ծխամորձ» եւ այլ բանաստեղծություններում ուրվագծվում է մի կերպար, որը խառնված է հեղինակային եսին, կերպար, որը բոլորից տարբերվում է, մարդ, որն իր ազգային արժեքներն օտարին չի վստահում, այլ գողից հետ է վերցնում, մարդ, որը գրիչով արարում է, որը խոնարհվում է իր հայրենիքի ու ժողովրդի առաջ (նույն տեղում, էջ 142):

Իսկ ես միայն բերքին առջեւ խոնարհող
Գիր ու գիրքով խաչքուռ շինող ընծայող
Երգ ու սազով մաճկալ բռնող մանգալ
շարժող

մեր օրերու այգաբացին
մեքենական արոր վարող
ու կալ կամնող ձեռքերուն
Կաղ հորինողն ու տակ տակի տաղ շարողը
հաղ կանչելով լեռներն ի վեր պար
պարողը...



Հարկ է նկատել, որ «Ազատագրություն» շարքի գաղափարական բովանդակությունն անդրադարձնում են բանաստեղծություններում հանդես եկող յուրօրինակ խորհրդանիշները: Առաջին հերթին մահ գործառույթ ձեռք են բերում բնության երևույթները՝ ծառը, դաշտը, ջուրը, անձրևը եւ այլն: Բնության սովորական նկարագրություններից բանաստեղծը հասնում է գաղափարական մեծ ընդհանրացումների: Նա իր սրտի եւ հոգու ձայնը, ձուլված կորուսյալ հայրենի կարոտից, ուժացման տագնապներից, սրտի թեւերով հանձնում է սերունդներին: Ճիշտ է ասված. ««Ազատագրություն» հայ իրականության մեջ առաջին ծրագրային ամբողջական քերթողագիրքն էր, որն արտացոլում էր Շարժման հոգեբանական եւ գեղարվեստական զարգացման նախադրյանները, հիրավի խոշոր երեւոյթ էր հայ գրական անդաստանում...» (Ս. Դանիելյան, Բանաստեղծության ազատագրումը, Ս. Էջմիածին, 1999, էջ 78):

Մերի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

Կրակի խորհրդապատկերը Մուշեղ Իշխանի «Կրակը» ժողովածուում

Սկիզբը՝ թիվ 4–5

Այն, որ Աստվածաշունչը գրական-գեղարվեստական հուշարձան եղել ու մնում է շատ գրողների համար, նորություն չէ: Սուրբ Գրքի իմացական եւ գեղարվեստական անսպառ հնարավորություններից տարբեր չափերով օգտվել են շատ արվեստագետներ: Ամմասն չի մնացել նաեւ Մ. Իշխանը: Թե՛ աստվածաշունչյան հղումներում, թե՛ Աստծու մասին արված դիտարկումներում Մ. Իշխանը երեւում է իբրեւ մեծ հավատացյալ («Կրակը» ժողովածուում առանձնանում է «Կենդանի մահացում» վերնագիրը կրող բանաստեղծությունը, որի քնարական հերոսը գտնվում է ատարաբխայի մեջ: Բացալայում են հոգեկան տանջանքները եւ զգայական ընկալումները: Բայց հետաքրքրականը ոչ այնքան հոգեկան ապատիայի վիճակն է, որքան այդ վիճակին հասնելու՝ հերոսի ճանապարհը: Արդյո՞ք Աստծու նկատմամբ անվերապահ հավատն է մահվան մասին սառը դատողություններ ծնում, թե՛ հեղինակը տրամաբանական մտածողությամբ կարողանում է իրականությունն ընկալել վախի եւ տագնապների հաղթահարումով: Հի կարելի չոչանցել գրողի անցած կյանքի ուղին, որն ընթացել է կորուստներով՝ տեղի տալով էմոցիոնալ սթրեսների, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են ատարաբխային վիճակների: Եվ որքան էլ տողերի արարքում նկատելի է գրողի հավատն առ Աստված,

այնուամենայնիվ նրա թե՛ քնարերգությունը, թե՛ դրամատուրգիան գերծ են բացորոշ բարոյախրատական շեշտերից:

Աստվածաշունչյան մոտիվներն արտահայտված են նրա թե՛ անձնական կյանքի, թե՛ հայրենաբաղձության մասին խոհերում: Պետք է մշել, որ Իշխանի քնարերգության մեջ դրանց գործածությունը բխում է տվյալ երկի ներքին տրամաբանությունից եւ գեղարվեստական մեկնաբանություններում գործածվում որպես համեմատություն: Նշենք նաեւ, որ այդ զուգահեռները հաստատական են:

Ակնհայտ է գրողի հետաքրքրությունը սուրբգրային այն տարրերի նկատմամբ, որոնք կապված են կրակի հետ: «Կարոտի ցանկալ» բանաստեղծության մեջ առկա է հերոսի կարոտի ու տենչերի տեսականությունը խորհրդանշող անկեզ մորենու մոտիվը (էջ 67):

Կը հալածե տեսիլքդ ինձ, իմ հեռավոր
սիրելի.
Ամեն տեղ քեզ կ'որոնեն՝
աստանդական, մտացիր,
Սեղմած կարոտդ կուրծքիս՝ իբրեւ
անկեզ մորենի,
Որ կը վառի անդադար, սակայն երբեք
չի հատնիր:

Աստվածաշունչյան մյուս միավորը, որին դիմում է Իշխանը, «Տառ կույսերի առակն» է, որը գեղարվեստականացվել է «երգ համեցման ու կարոտի» (Վերնագրի «հա-



մեցման» բաղադրիչը, այնուամենայնիվ, անհասկանալի է մնում: Կամ միգուցե հեղինակն ակնարկում է հարսանեկան այն խնջույքը, որին պիտի մասնակցեին տասը կույսերը եւ որ այդպես էլ չմասնակցեցին, դրսում մնացին) բանաստեղծության մեջ՝ քնարական հերոս — հիմար կույս զուգորդումներով: Համեմատության հիմքը (Առակում ասվում է, որ հարսանյաց օր էր, եւ տասը կույսեր, լապտերներ առած, ելան դիմավորելու փեսային: Կույսերից հինգն իմաստուն էին, իսկ մյուս հինգը՝ հիմար: Իմաստունները լապտերների հետ ամաններով ձեռք վերցրեցին, իսկ հիմարները՝ ոչ: Փեսան ուշացավ, եւ կույսերը քնով ընկան: Կեսգիշերին ձայն լսվեց, թե՛ «Ահա փեսան գալիս է, ընդառաջ ելեք նրան»: Այնժամ

կույսերն ելան եւ կարգի բերեցին իրենց լապտերները: Քանի որ հիմար կույսերը ձեռք չէին վերցրել, նրանց լապտերներն սկսեցին մարել: Ուստի եւ իմաստուն կույսերից ձեռք խնդրեցին: Իսկ իմաստուն կույսերը պատասխանեցին. «Գուցե մեզ եւ ձեզ չբավականացնի, գնացեք վաճառականների մոտ եւ ձեզ համար գնեք»: Երբ նրանք գնացին ձեռք գնելու, փեսան եկավ: Պատրաստ կույսերը նրա հետ հարսնատուն մտան, եւ դուռը փակվեց: Հետո եկան մյուս կույսերը եւ ասացին. «Տեր, Տեր, բաց դուռը»: Իսկ փեսան պատասխանեց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, թե ձեզ չեն ճանաչում»: Առակը վերջացնելուց հետո Հիսուս ավելացրեց. «Արթուն եղեք, քանի որ ոչ օրը գիտեք եւ ոչ՝ ժամը» (Մատթ. ԻԵ 1–13)), առանց լապտերի ձեռքի, փողոցում հայտնված հիմար կույսերի եւ քնարական հերոսի վիճակների նմանությունն է: Շարժման եւ գործողության իմաստային ձեւերի՝ «եկան», «դարձան» եւ «միայն ես մնացի» կրկնությունները, բանաստեղծության կառուցվածքում կրակի նշաններ հանդիսացող բոցեղեն երգ, տենդոտ սույլեր, հանգչող լույսեր, թույլ ճառագայթ, լապտեր, մոմ նշանների հետ գործածվելով, դառնում են կյանքի լուսանցքում հայտնված, սակայն հույսը ամենեւին չկորցրած մարդու հոգեվիճակի նկարագրությունը: Բանաստեղծի երկերում կրակի խորհրդապատկերները հետաքրքիր դրսևորումներ են ունենում անցյալ-ներկա հակոտնյա զույգը մեկնաբանելիս: ➔ էջ 8

Մանրանկարներն իմ աղոթքներն են



Քրիստոսի անվանի գեղանկարիչ, մանրանկարիչ, Վրաստանի հայ նկարիչների միության նախկին նախագահ (2011–2016), ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալ» եւ «Վիլյամ Սարյան» մեդալների ասպետ Մերուժան Շահումյանն օրերս մեզ ծննդյան 70 եւ ստեղծագործական գործունեության 55-րդ տարեդարձները:

Մերուժան Շահումյանը հայ կերպարվեստի թիֆլիսյան դպրոցի՝ Հովնաթանյանների գերդաստանով (17–19-րդ դարեր) սկսվող վառ փառանքի արժանավոր հետնորդներից էլ հայ ժամանակակից մանրանկարչության եզակի ներկայացուցիչներից մեկն է, որն իր ժամանակների հուզումներն ու մտածումները դիտորդին է հաղորդում մանրանկարի լեզվով: Ռուսական գրական-փիլիսոփայական «Լոգոս» ամսագրի խմբագիր, Սիմրան (Կովալյով) արեղան իր «Մերուժան Շահումյանի կրոնա-փիլիսոփայական գեղանկարչության ուղերձը» աշխատության մեջ հայ նկարչի մանրանկարչությունը դիտում է իբրեւ գեղանկարչի ու Արարչի կամքի միաձուլ արտահայտությամբ դեպի փրկություն տանող արվեստ: Ըստ հեղինակի՝ Մերուժան Շահումյանի՝ աստվածաշնչյան թեմաների ինքնատիպ ներշնչումներով ու լուծումներով իմաստավորված մանրանկարչությունը կոչ է դեպի կատարելություն եւ օգնում է այլ կերպ մայել կյանքին ու նրանում մարդու ունեցած դերին:

Նկարչի առաջին անհատական ցուցահանդեսները տեղի են ունեցել Կանադայի Մոնրեալ եւ Տորոնտո քաղաքներում (1993 թ.) եւ արժանացել տեղի մամուլի բարձր գնահատականին:

Վրձմարվեստի վարպետը վիրահայության շրջանում ճանաչված է նաեւ որպես եռանդուն ու նախանձախնդիր ազգային գործիչ: Այս առումով բեղուն էր նրա համագործակցությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վիրահայոց թեմի մշակութային կենտրոնների հետ: Բոլորս հիշում ենք այն օրերի թեմակալ առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանի եւ Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանի՝ հայ կերպարվեստի ավանդույթների պահպանմանն ուղղված աշխատանքները: Նրանց նախաձեռնած հայ, վրացի ու այլազգի տարբեր սերնդի գեղանկարիչների մարդաշատ ցուցահանդեսները Թբիլիսիում, Ջավախքում, ապա՝ Վրաստանի հայ ու վրացի նկարիչների փոխադարձ ցուցահանդեսները Գյումրիի, Էջմիածնի, Երեւանի պատկերասրահներում հայկական ու վրացական մշակութային կապերի նոր օրակներ ամրագրեցին:

Դեռ խորհրդային տարիներից թբիլիսահայ գեղանկարչի

անհատական, հանրապետական, միջազգային բազմաթիվ ցուցահանդեսներում առանձնակի ընդունելություն գտած կտավներն այսօր զարդարում են աշխարհի հայտնի թանգարանների ու անհատ մարդկանց հավաքածուները:

Ուստի, ծննդյան հոբելյանն առիթ ընդունելով, ցանկացանք արվեստասեր մեր ընթերցողին ներկայացնել այս փոքրիկ հարցազրույցը նկարչի հետ:

– Ի՞նչ կուզենայիք, որ Ձեր արվեստը տար դիտողին:

– Իմ արվեստը երկու մասից է կազմված՝ սրբանկարչություն եւ արքայական: Իմ աշխարհում դրանք միմյանց չեն հակասում, հակառակը՝ իրար լրացնում են իրենց խորհրդով: Եթե մանրանկարչության մեջ ամեն ինչ իրական է, արքայական այդ նույնը մեկ ուրիշ իրականության մեջ է մատուցում: Իմ նկարչության գլխավոր իմաստը եւ դարձրել են սրբանկարչությունը: Սրբանկարն իմ խնդրանքը, իմ աղոթքն է առ Աստված ու նաեւ՝ փորձը մարդուն տանելու դեպի Աստված:

– Միջնադարում ծաղկում ապրող հայ մանրանկարչությունը, շնորհիվ Թորոս Ռուսիկի, Սարգիս Պիծակի, Թորոս Տարոնեցու, Մոմիկի, Հակոբ Զուղայեցու, Իզմատիուհի, Գրիգորի եւ այլոց, ձեւավորել է կայուն ավանդույթներ, որի հետեւողական արտահայտությունն է նաեւ ժամանակակից մանրանկարչությունը: Ձեր կարծիքով՝ ի՞նչ է հայ մանրանկարչության առանձնահատկությունը, նրան տարբերող բնորոշիչը:

– Համաշխարհային կերպարվեստում հայ մանրանկարչությունն ունի ուրույն, անկրկնելի դիմագիծ: Նա խիստ տարբերվում է ռուսական, բյուզանդական եւ մանրանկարչության մյուս դպրոցներից: Առանձնանում է հեղինակայնությամբ, գունագեղությամբ, արտահայտած իմաստով եւ ընդգծված անկեղծությամբ:

– Մերուժան Շահումյանի երկու ուղիներից որի՞ն է փոխանցվել հայրական տաղանդը:

– Երկուսն էլ իրականում տարված են նկարչությամբ: Օժտված են նկարելու շնորհքով եւ դա անում են մեծ ոգետությամբ: Անկեղծ ասած՝ ինձ ուրախացնում է, որ ունեն իրենց ոճը եւ իրենց գործն անում են առանց իմ ուղղորդումների:



– Ի՞նչո՞ւ եք կրոնը համարում մարդուն վերափոխելու միջոց:

– Սրբանկարչությունն ունի իր խորհուրդները: Այդ կերպարները «կանչում» են մայրողին, ձգում, որովհետեւ խոսող, աղոթող դեմքեր են եւ մարդու հոգում անհետք չեն մնում: Ծնվում է, մի տեսակ, երկխոսություն դիտողի եւ

սրբանկարի միջեւ: Այդպես հեշտ է մարդուն դեպի Աստված տանելը, այդ փորձը դարերից է եկել...

– Ձեր կարծիքով՝ ի՞նչ է պրոֆեսիոնալիզմը:

– Ուզածդ մասնագիտություն՝ վարորդի, կոշկակարի, բժշկի, շինարարի... պետք է իրագործվի սիրով, նվիրվածությամբ եւ պատասխանատվությամբ: Այս երեք պայմանների միասնությունն էլ, իմ կարծիքով, բերում է պրոֆեսիոնալիզմ:

– Ճանաչում եք որեւէ ժամանակակից հայ, վրացի կամ այլազգի մանրանկարչի, եւ Ձեր վերաբերմունքը նրա գործերի նկատմամբ:

– Անուններ չեն ուզում մշտել այն մտավախությամբ, որ կարող են մեկին բաց թողնել... Մեր շփումը միմյանց հետ եղել է Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի նկարիչների ընդհանուր ցուցահանդեսներում: Դրանցում ներկայացված գործերը, ինքնին, մեզ հանգեցրել են համեմատությունների, արվեստի տարբեր դպրոցների բնորոշ կողմերը զգալուն, զարգանալուն, գիտեցածը նորով լրացնելուն:

– Ի՞նչ կտալ եք վրձնում հիմա:

– Իմ վերջին գործի վերնագիրն է՝ «2020 թ., նոյեմբերի 9»՝ Արցախյան պատերազմի ավարտի եւ Հայաստանի կապիտուլյացիայի ստորագրման բոլորիս ցնցող օրը...

– Արցախյան պատերազմն անկումային տրամադրություն է բերել մեզանում, բայց համաձայն չե՞ք, որ կյանքը շարունակվում է...

– Մեր ժողովրդի պատմության ճանապարհին անկումներ, ցավոք, շատ են եղել, բայց հայ ժողովուրդը դրանք միշտ հաղթահարել է հավատքով, հույսով եւ ազգասիրությամբ: Կհաղթահարի եւ սա...

– Աշխարհի բոլոր բանաստեղծները, անկախ ազգությունից, երգել ու երգում են մաքուր, լուսավոր սերը: Մերուժան Շահումյանի կարծիքով՝ է՞րբ է սերը մաքուր, լուսավոր:

– Ինձ համար մաքուր, լուսավոր սերն այն է, երբ պատրաստ ես գոհաբերության: Դա ինքնահատմանի, քեզ մնացին ծառայելու կարողություն է, երբ լցված ես մշտապես գոհաբերելու, տալու եւ ոչ թե ստանալու զգացումով:

– Շնորհակալություն՝ հետաքրքիր պատասխանների համար:

Միանալով բոլոր շնորհավորանքներին՝ ցանկանում



ենք Ձեզ ու Ձեր ընտանիքին ամսասան առողջություն, հոգեկան խաղաղություն, կյանքի երկար ճանապարհ: Թող Ձեր կյանքում երբեք չխամրի Աստծո տված ստեղծագործական ներշնչանքի լույսը:

Զրույցեց Զուլիետա ԲԱՂԱՆՅԱՆԸ

Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են մի շարք մշակումներ:

Գաբրիել վրդ. Սարգսյանը, ազատվելով Վանորեից տեսչությունում ստանձնած պարտականություններից, ծառայության է կոչվել Դանասկոսի հայոց թեմում:

Սիփան վրդ. Գեւորգյանը, ազատվելով Վանորեից տեսչությունում ստանձնած պարտականություններից, իր հոգեւոր ծառայությունը կշարունակի Վիրահայոց թեմում:

Սեւակ քհն. Սարիբեկյանը, ազատվելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Ռուբեն Սեւակ» թանգարանի տնօրենի պաշտոնից, ծառայության է կոչվել Կոտայքի թեմում:

Հարություն քհն. Սեփանյանը, ավարտելով իր հոգեւոր սպասավորությունը Արգենտինայի հայոց թեմում, ծառայության է կոչվել Կոտայքի թեմում՝ թեմակալ առաջնորդի իշխանության ներքո:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆՑԱՆ (1830–1892)


← էջ 5

Պատկանյանի՝ բարբառով գրված պատմվածքներից յուրաքանչյուրը նորմալիզացված կյանքի մի գունդը դրվագ է՝ հին բարի ժամանակների մարդկանց առաքիլությունների ու սովորույթների դրվատումով ու նոր ժամանակների ապականված բարքերի ու բարոյական մահացի՝ ընչաքղցության, տգիտության ու տմարդության դատապարտումով: Հերոսները բնութագրվում են իրենց բնական անկեղծ ինքնախոստովանություններով ու երկխոսություններով, կատարված դեպքերի միամիտ ընկալմամբ ու ներկայացմամբ, որով գեղարվեստական պատկերը դառնում է հավաստի, իրականության հարազատ ու անխաղախ ցույցում: Այդպիսիք են՝ «Պագարի կալաճի» (շուկայի խոսքերով), «Բարեկարգեր», «Վայնա» (պատերազմ), «Հին տուն, նոր տուն», «Sermo» (քարոզ), «Վարդապետ», «Քաղաքում մեռելներ» եւ այլ պատմվածքներ: Սակայն այս բոլորի մեջ իր գեղարվեստական ուժով, կերպարաստեղծման բարձր արվեստով առանձնանում է «Փորսողին Ավագը»: Այս երկուն ինքնակերպավորված հերոսի հան-

դեպ Պատկանյանի երգիծանքը հասնում է գոգոլյան, պարոդյանական-օտյանական, չեչոփոյան մակարդակի, որովհետեւ նա մխրճվել էր հասարակական կյանքի խորքերը եւ տեսել նոր ժամանակների այն երեւույթները, որոնք մարդուն դարձնում են շահամոլ, ագահ ու խորամանկ, բութ ու տգետ: Այդ հատկություններով նրանք դառնում են լուսավորության թշնամի, կյանքի առաջընթացը կաշկանդող հասարակական չարիք:

Փորսող Ավագի էությունը, նրա բնավորության ծիծաղելի ու դատապարտելի գծերը երեւան են գալիս խոսակցի հետ ծավալված զրույցի մեջ, որտեղ ողջամիտ զրուցակցի հարցերին պատասխանելով՝ հերոսն ինքն է բնութագրում իր մտածելակերպն ու վարքագիծը:

Պատահաբար Վիեննա եւ Փարիզ ընկած այս հետամնաց տգետը, որի կյանքի գերնպատակը միայն ուտելն է, հեզմուն, արհամարհում է եվրոպական լուսավորությունը, ողջ քաղաքակրթությունն ու արվեստը: Ընկերոջ հորդորով նա օպերա է գնում միայն այն պայմանով, երբ վերջինս խոստանում է ներկայացունից հետո կե-



րակրել ռեստորանում: Նրան ամենեւին չեն հետաքրքրում երաժշտությունն ու դերասանների խաղը, որովհետեւ ուշք ու միտքը ուտելն է: Բայց չի հավանում եվրոպական մուրբ կերակուրները, որովհետեւ դրանցով նրա ահագին փորը չէր կշտանում, դրանք հակադրում է Նոր Նախիջևանի Աբոռ-նի ռյադի (շուկայում՝ որկրամուկների շարք) յուղոտ ճաշերի կամ փարիզյան առլեքին կոչված ճաշի հետ, որ մեծահարուստ տներին էլ ռեստորանների ճաշերի՝ չնչին գնով անասունների համար դույլերով վաճառվող

ավելցուկն էր, որի մեջ երբեք հայտնվում էր թռչնի կամ ձկան կմախք, մարմնի կեղեւ կամ չհաված պաղպաղակի մնացորդ:

Փորսող Ավագին իրենցից հեռացնելու համար «վատահել» էին մի տարօրինակ անօգուտ պաշտոն. ծովափին կանգնած պիտի հաշվեր անցնող ձկները: Իսկ երբ հեռացնում են, անկեղծորեն խոստովանում է, թե ինչու է ուզում անպայման պատգամավոր կամ պաշտոնյա լինել: Որովհետեւ դա նրան տալիս էր մյուս պաշտոնակիցների ծննդյան օրերին տարվա մեծ մասը ձրի ուտելու եւ սեփական դրամը խնայելու հնարավորություն: Նրա կենսափիլիսոփայությունը, բոլորի վրա կատաղած շան պես հաշելով, իր գոյությունն զգալի դարձնելն է:


Իսկ ինչ հաճույքով է Ավագը նկարագրում ուտելու երանությունը, ուտելիքի լավագույն կտորներն աննկատ վերցնելու եւ թանկանոց խմիչքները պատուհանի մոտ բոլորից թաքուն ճաշակելու իր զգվելի խորամանկությունը:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Կրակի խորհրդապատկերը Մուշեղ Իշխանի «Կրակը» ժողովածուում



← էջ 6

Անցյալը դրսևորվում է հերոսի՝ հայրենի տան եւ սիրած էակի հիշատակների հետ կապված հիշողությունների եւ կարոտի միջոցով: Վեհանույշ Թեքեանը գրում է. «Հայրենիքի ամենակարող ոյժի, ամոր ամառափայլ սերմերում մասին խօսքեր են գրեթե մեր բոլոր գրական սերունդները, բայց երանվող Մուշեղ Իշխանի սերունդն է, որ հնարեց — կարոտ ու երազ ամեն գրողի անձկությունն են. Կարօտը կ'այրե, մինչ երազը կը դարձան: Երկուքն ալ նույնքան անհրաժեշտ, գլխազիր Որբութեան դիմա-նալու տաժանքին» (Վեհանույշ Թեքեան, Մուշեղ Իշխան՝ մրգաստանին լիութիւն, Գարուն, Երեւան, 1994, թիվ 2): Սակայն այս տրամադրությունների մեջ գերիշխողը հայրենիքի կարոտախտի ապրումն է: Այս պարագայում Իշխանը հետաքրքիր հնարք է կիրառում՝ բանաստեղծական տեքստ ներմուծելով մեղեդի, երաժշտություն եւ այդ ոլորտին վերաբերող բառ-հասկացություններ: Այսպիսով՝ երաժշտությունը դառնում է անցյալ տեղափոխվելու միջոց: Եվ այս ամենի արտահայտության հիմքում կրակն է՝ իր բանաստեղծաժողովրդական փոփոխակներով՝ *արյուն, զոհաբերման գինի, տենդ, այրող կարոտ*: Կարող ենք ասել, որ բանաստեղծություններն սկսելով մահվան գաղափարի եւ ավարտելով հարության գաղափարի արժարժուններով՝ Իշխանն արտահայտում է հայ ժողովրդի հարատեւության գաղափարը: Այս ամենը խորքում

նաեւ իր եւ սեփական ժողովրդի ողբերգությունը զուգահեռելու միտում ունի:

Տան կարոտի զգացողությունից էլ ծնվում են հավերժական վերադարձի խոհերը, որոնք ստանում են անձնական եւ ազգային տարազավորում: Այդ խոհերը կերպավորվում են իբրեւ հավերժական վերադարձ դեպի մայրասկիզբ: Այս տրամադրությունների արտահայտությունն է «Ջատիկի առավոտ» բանաստեղծությունը: Երկի բնագրային միջավայրը սուրբ տոնի միջավայրն է: Իսկ «Փողոցներում մեջ տակավ օրը ազատ կ'արթննա. // Հագուստներու երփներանգ կը ծաղկի տոնն անդադար» («Ջատիկի առավոտ», էջ 76) բանաստեղծական տողը վերակենդանացնում է հեթանոսական շրջանում մշվող տոնի պատկերը, երբ պարտադիր նորացվում եւ կարգաբերվում էին հագուստները: Սակայն նկատելի է, որ տարբեր են տոնի խորհուրդը եւ բանաստեղծի ցանկությունները: Գիտենք, որ «զատիկ» նաեւ անցարան է նշանակում՝ որպէս հիշատակություն հրեաների՝ Եգիպտոսից դուրս գալու եւ Կարմիր ծովով անցնելու: «Ջատիկ» նշանակում է նաեւ զատում, բաժանում, հեռացում մեղքերից, չար գործերից, չարչարանքներից եւ վերադարձ առ Աստված ու բարին: Բայց իրականում որտեղից էր ուզում զատվել եւ դուր ուզում գնալ բանաստեղծը: Հերոսի «զատումը» վերադարձ է դեպի մայրասկիզբ, եւ Ջատիկի տոնը պարզապէս միջոց է՝ արտահայտելու «տարագիր տունեն» դեպի «պապեմական տունը» վերադառնալու իր ցանկությունը («Ջատիկի առավոտ», էջ 77).

Ահա կերթամ ես դարձյալ, մնամ ամենեղ հին տղուն, Մեր մատուռին մեջ մեղեհ ծնրադրել անձկագին, Հայ տաղերու խորհուրդով հաղորդվի դարերուն եվ բարձրանալ պապերուս հրաշագոր հավատքին...

Սա հայրենի տուն վերադառնալու այն նույն տրամադրության արտահայտությունն է, ինչը տեղ էր գտել «Կրակը» ժողովածուին նախորդած «Տուններու երգը» (1936 թ.) ժողովածուում: Դա բանաստեղծի երազն է, որ արտահայտվում է տարբեր գրքերում՝ մերթ հայ մամիկի բերանով («Հայ մամիկին աղոթք»), մերթ գնչուհու ցանկությամբ («Գնչուկի վրանը»): Իսկ «Դուք, մամիկներ սեւագգեստ» բանաստեղծության մեջ հայ մամիկներին «ափ մը հայրենի հող» ցան-

կանալը, որը, ըստ էության, ցանկություն էր սեփական հողում, կրկին հավերժական վերադարձի գաղափարն է արտահայտում: Այս եւ մի շարք այլ երկերում արդեն հաղթահարված են կորստի վախերը:

Կրակի եւ զոհաբերման խորհրդապատկերների միջոցով բանաստեղծին հաջողվում է հյուսել հայրենագրված սերնդի լքվածության, զրկվածության եւ կարոտի զգացումները. «Ա՛հ, իմ արյունս գինիի պէս քրմական // Հրդեհներով, զոհարներով կը թնդա // Բայց չկրցա, ու չեն կարող թափել զայն // Մեծ երագի մը սրբազան բոցին վրա»:

Ստացվում է, որ արյուն-կրակ զույգը հայրենասիրական թեմայով գործերում արտահայտված է հակասության մեջ. արյունն իբրեւ քաղցր թույն, այսինքն՝ մահ, եւ արյունն իբրեւ զոհաբերություն, այսինքն՝ կյանք: Առաջին նշանակությամբ քաղցր թույն արտահայտությունը խորհրդանշական իմաստով մատնանշում է սփյուռքահայության դանդաղ, աննկատ ուժացումը, ինչը տանում է ձուլման, այսինքն՝ հոգեւոր մահվան: Իր «Տրովադայի ձին» հոդվածում Իշխանը գրում է. «Մեր պաշտպանած հոգեկան բերդի պարիսպները խոշոր ճեղքեր ստացած են: Տրովադայի ձին բերդեն ներս սահած է, մեր մեջ է արդեն: Ժամանակը է ահազանգը լսելու» (Մուշեղ Իշխան, Տրովադայի ձին, Մարմարա, Պոլիս, 11. 07. 1969, էջ 2): Սփյուռքում տիրող սոցիալ-հոգեբանական բարդ տեղաշարժերի, ցավալի եւ տագնապալի երեւույթների եւ ձախողումների այս շղթան Իշխանը խտացնում է որոշակի նշանաշարուն: Սակայն իմաստային այս դաշտում «ամարգասիք պոռթկումներով», «երկունքներից զուրկ», «ունայնաբույս ծառի ավիշ», «քաղցր թույն» բանականակցություններով հատկանշվող արյունը, որը, ըստ էության, սփյուռքահայության ուժացման վտանգն է կանխորոշում, «Կաղանդի գիշեր», «Կենդանի մահացում» եւ «Դուք, մամիկներ սեւագգեստ» բանաստեղծություններում հակադրվում է աստղերի, աստղերից վառվող մոմի եւ արեւի լույսին, հայ մամիկների սրտի մշտապես արյանը: Աստղ-մոմ-արեւ նշանաշարն ունի խորհրդաբանական ներքին իմաստ. այն խորհրդանշում է հավատքի մշտապես եւ կենդանի պահող լույսը: Եվ ա այն հավատ-լույսն է, որ «մանկություն չունեցող մարդկանց» արյունը մաքրում է թույնից եւ կենարար ավիշ ներարկում:

Առհասարակ հայրենիքի անցյալը ներկայացնող բանաստեղծություններում հեղի-

նակը անցում է կատարում ներկայից անցյալ, դեպի հայերի ցեղասպանությունը: Այդ անցումը հատկանշվում է եղեռնական իրադարձությունների պատկերման բացակայությամբ, սակայն ողբի հատկանիշներով եւ լավատեսական տրամադրություններով: Այս հատկանիշը բնորոշ է Իշխանի մյուս գրքերին եւս: Տեղին է հիշատակել գրականագետ Ռ. Փիրունյանի հետեւյալ դիտարկումը. «Մուշեղ Իշխան, Համաստեղ, Ջարեհ Որբունի, Նիկողայոս Սարաֆյան, Շավարշ Նարդունի, Շահան Շահնուր հասել են մեզ իրենց անկեղծ, անբռնազբոսիկ, արվեստով բաբախում հոգու հառաչանքներով, երազներով, ընդվզումով, սիրո ոգեւորումի ու հուսահատության արտահայտություններով: Սրանց ստեղծած գրականությունը եթե արտաքնապես ուղղակի ամնչություն չունի Աղետի հետ, եթե չի պատմում Աղետը, սակայն կրում է ազդեցությունը Աղետի, հատկանշորեն արտացոլում է այդ որբացած սերնդի գոյապաշարը — բառի ամենալայն առումով — հետեւեղման Սփյուռքի մեջ» (Ռուբինա Փիրունյան, Սփյուռքահայ գեղարվեստական գրականությունը Մեծ եղեռնի մասին, Պատմա-բանասիրական հանդես, Երեւան, 1990, թիվ 2, էջ 26):

Շարունակելի

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության
ամբիոնի դասախոս

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՋԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 31.03.2021 թ.

Տպագրանակ՝ 1225